ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
22 ապրիլի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 55 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սուրեն Գրիգորյանը, Լևոն Հովհաննիսյանը և Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շավարշ Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արփենիկ Մուրադյանը և Սոնա Թևանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետ Ալիկ Վարդազարյանը, արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանը, լրատվության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Սիմոնյանը, շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանը, «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Սարգիս Մանուկյանը, «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն Սաշա Կատվալյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2025 թվականի մայիսի 20-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – Կողմ՝ 60, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Առաջարկն ընդունվեց միաձայն:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նարեկ Մանուկյանը իր դիմումի համաձայն դադարեցրել է ավագանու անդամի իր լիազորությունները:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 27-ի հ.20 արձանագրության՝ Երևանի ավագանու Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Արևիկ Բլեջյանցին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 2025 թվականի ապրիլի 22-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 25 հարց, որից՝ 2-23-րդ հարցերը չզեկուցվող են.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքում Վահրամ Արիստակեսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
3. Աշոտ Քալանթարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
4. Ռաֆայել Մանվելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
5. Ադիբեկ Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
6. Ուրուգվայի ազգային հերոս Խոսե Արտիգասի կիսանդրու տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Մ.Բաբաջանյան փողոց հ.117/4 հասցեում բնակելի տների կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
8. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա հ.13/12 և Նորագյուղ թաղամաս հ.66/3 հասցեներում բիզնես կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
9. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դավիթ Անհաղթի փողոց հ.4/20, 4/21 և Կարապետ Ուլնեցի փողոց հ. 43/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
10. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց հ. 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

11. Երևան քաղաքի էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի 5-րդ նրբանցք հ. 13/7 հասցեում օգտագործված յուղերի և քսայուղերի վերամշակման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

12. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոց 3-րդ նրբանցք հ.21/3 հասցեում հրուշակեղենի արտադրության նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

13. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ.19 և 25/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

14. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Կ. Հալաբյան փողոց հ. 16/2 հասցեում ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

15. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)

16. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման (դեպո) մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին: (Չզեկուցվող)

17. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)

18. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)

19. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)

20. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

21. Գույքի նվիրատվության մասին: (Չզեկուցվող)

22. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

23. Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին: (Չզեկուցվող)

24. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N267-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)

25. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշման գործողությունը կասեցնելու մասին: (Զեկուցվող)

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ օրակարգի չզեկուցվող՝ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Մ. Բաբաջանյան փողոց հ.117/4 հասցեում բնակելի տների կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին», 8-րդ՝ «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա հ.13/12 և Նորագյուղ թաղամաս հ.66/3 հասցեներում բիզնես կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» և 9-րդ՝ «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դավիթ Անհաղթի փողոց հ. 4/20, 4/21 և Կարապետ Ուլնեցի փողոց հ. 43/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին», 13-րդ՝ «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ.19 և 25/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցերի վերաբերյալ գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Օրակարգի զեկուցվող 15-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցի վերաբերյալ գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Ելույթով հանդես եկավ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և առաջարկեց օրակարգի զեկուցվող 16-րդ՝ «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման (դեպո) մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակագին համապատասխան:

Առաջարկը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 31, դեմ՝ 28, ձեռնպահ՝ 3

Առաջարկը չընդունվեց:

Ելույթով հանդես եկավ ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը և առաջարկեց օրակարգի զեկուցվող 15-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակագին համապատասխան:

Առաջարկը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 34, դեմ՝ 25, ձեռնպահ՝ 3

Առաջարկն ընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2025 թվականի ապրիլի 22-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքում Վահրամ Արիստակեսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
3. Աշոտ Քալանթարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
4. Ռաֆայել Մանվելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
5. Ադիբեկ Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
6. Ուրուգվայի ազգային հերոս Խոսե Արտիգասի կիսանդրու տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Մ.Բաբաջանյան փողոց հ.117/4 հասցեում բնակելի տների կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
8. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա հ.13/12 և Նորագյուղ թաղամաս հ.66/3 հասցեներում բիզնես կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
9. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դավիթ Անհաղթի փողոց հ.4/20, 4/21 և Կարապետ Ուլնեցի փողոց հ. 43/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
10. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց հ. 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
11. Երևան քաղաքի էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի 5-րդ նրբանցք հ. 13/7 հասցեում օգտագործված յուղերի և քսայուղերի վերամշակման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
12. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոց 3-րդ նրբանցք հ.21/3 հասցեում հրուշակեղենի արտադրության նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

13. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ.19 և 25/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
14. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Կ. Հալաբյան փողոց հ. 16/2 հասցեում ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
15. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման (դեպո) մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
16. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)
17. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)
18. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)
19. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
20. Գույքի նվիրատվության մասին: (Չզեկուցվող)
21. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
22. Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին: (Չզեկուցվող)
23. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N267-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
24. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
25. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշման գործողությունը կասեցնելու մասին: (Զեկուցվող)

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 24

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 22-րդ հարցերը:

Տ.Ավինյանը ներկայացրեց չզեկուցվող հարցերի վերաբերյալ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովների կողմից տրված եզրակացությունները:

2. Երևան քաղաքում Վահրամ Արիստակեսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի 11-րդ փողոցը (սկսվում է Արշակունյաց պողոտայից, հասնում՝ նախկին կերամիկական իրերի կոմբինատ)՝ նրբանցքներով, անվանակոչել ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, հայ խորհրդային պարուսույց-բալետմայստեր Վահրամ Արիստակեսյանի անվամբ՝ «Վահրամ Արիստակեսյան փողոց», «Վահրամ Արիստակեսյան փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է, նախկին կերամիկական իրերի կոմբինատից, հասնում կանաչապատ տարածք), «Վահրամ Արիստակեսյան փողոց, 2-րդ նրբանցք» (1-ին նրբանցքին զուգահեռ):

3. Աշոտ Քալանթարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն ականավոր զինագործ, արցախյան պատերազմի հերոսամարտիկ Աշոտ Քալանթարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Վարդանանց փողոցի հ.11 հասցեում փակցնելու համար:

4. Ռաֆայել Մանվելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր Ռաֆայել Մանվելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կոմիտասի պողոտայի հ.1 հասցեում փակցնելու համար:

5. Ադիբեկ Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Ադիբեկ Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոցի հ.24 հասցեում փակցնելու համար:

6. Ուրուգվայի ազգային հերոս Խոսե Արտիգասի կիսանդրու տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն Ուրուգվայի հրապարակում Ուրուգվայի ազգային հերոս Խոսե Արտիգասի կիսանդրու տեղադրմանը՝ համաձայն հավելվածի:

7. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Մ. Բաբաջանյան փողոց հ.117/4 հասցեում բնակելի տների կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Մ. Բաբաջանյան փողոց հ. 117/4 հասցեում բնակելի տների կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

8. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա հ.13/12 և Նորագյուղ թաղամաս հ.66/3 հասցեներում բիզնես կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԴԻՋԻՓՐՈՓԵՐԹԻ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա հ.13/12 և Նորագյուղ թաղամաս հ.66/3 հասցեներում բիզնես կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

9. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դավիթ Անհաղթի փողոց հ.4/20, 4/21 և Կարապետ Ուլնեցի փողոց հ. 43/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դավիթ Անհաղթի փողոց հ. 4/20, 4/21 և Կարապետ Ուլնեցի փողոց հ. 43/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

10. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց հ. 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Վիկտոր Տեր-Հովսեփյանի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց հ. 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր» 241-րդ կետի համաձայն՝ տարբեր նշանակության կանաչապատ տարածքների տեսակարար կշիռը բնակավայրի ընդհանուր տարածքի նկատմամբ պետք է լինի 40%-ից ոչ պակաս, իսկ բնակելի (բնակեցման) տարածքի սահմաններում՝ 25%-ից ոչ պակաս: Նշված պահանջը տվյալ նախատեսվող գործունեության դեպքում չի պահպանվում, քանի որ նախատեսվող կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին կազմում է 20,84 տոկոս:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

11. Երևան քաղաքի էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի 5-րդ նրբանցք հ. 13/7 հասցեում օգտագործված յուղերի և քսայուղերի վերամշակման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՋԻ ՎԻ ԱՅ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոց 5-րդ նրբանցք հ.13/7 հասցեում օգտագործված յուղերի և քսայուղերի վերամշակման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ արգելվում են տնտեսական կամ այլ գործունեության իրականացումը, ինչպես նաև նման գործունեություն իրականացնող օբյեկտների նախագծումն ու

կառուցումը, եթե դրանք կարող են հանգեցնել մարդու առողջության վատթարացման, բույսերի և կենդանիների գենետիկ ֆոնդի ոչնչացման, մարդու և շրջակա բնական միջավայրի համար անդառնալի հետևանքների: Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանով հաստատված ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի համաձայն՝ բանեցված ավտոմոբիլային յուղերը դասվում են վտանգավորության 3-րդ դասի թափոնների շարքին: Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի (այսուհետ՝ Նորմեր) 128-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ III-IV վտանգավորության դասերի թունավոր թափոնների տեղակայման, վնասազերծման, մշակման, արտադրության և սպառման օբյեկտները դասակարգվում են երկրորդ (II) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ շարքին: Նորմերի 116-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ներգործության աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական, արտադրական օբյեկտների շենքերի և շինությունների համար՝ կախված հզորությունից, շահագործման պայմաններից, շրջակա միջավայր արտանետվող աղտոտիչների բնույթից և քանակից, առաջացող աղմուկից, թրթռումից և այլ վնասակար ֆիզիկական գործոններից, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումներից, ինչպես նաև հաշվի առնելով շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա դրանց անբարենպաստ ազդեցությունը նվազեցնելու անհրաժեշտությունը, արդյունաբերական, արտադրական օբյեկտների սանիտարական դասակարգմանը համապատասխան, սահմանվում են սանիտարապաշտպանական գոտիների հետևյալ կողմնորոշիչ չափերը՝ (...) 2) երկրորդ (II) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ՝ 500 մ: Նորմերի 77-րդ կետի համաձայն՝ սանիտարապաշտպանական գոտին սահմանվում է քիմիական, կենսաբանական և ֆիզիկական ներգործության աղբյուրներից կամ արտադրական գործունեություն իրականացնելու համար օբյեկտին տրամադրված (պատկանող) հողամասի սահմանագծից: Տվյալ նախատեսվող գործունեության դեպքում հնարավոր չէ հստակեցնել մոտակա բնակելի շինության հեռավորությունն արտադրական օբյեկտից, քանի որ նախառեձնողը չի ներկայացրել արտադրական գործունեություն իրականացնելու համար օբյեկտին տրամադրված (պատկանող) հողամասի սահմանագծերը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

12. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոց 3-րդ նրբանցք հ.21/3 հասցեում հրուշակեղենի արտադրության նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՎԵԼԼԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոց 3-րդ նրբանցք հ. 21/3 հասցեում հրուշակեղենի արտադրության նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

13. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ.19 և 25/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԳԱՐԶՈՒ» ՓԲ և «ՌԵՏԻՆ 1» ՓԲ ընկերությունների կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 19 և 25/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

14. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Կ. Հալաբյան փողոց հ. 16/2 հասցեում ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Կ. Հալաբյան փողոց հ. 16/2 հասցեում ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

15. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման (դեպո) մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման (դեպո) մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

16. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյան փողոցի հ.46/4 հասցեում գտնվող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15062021-01-0329 վկայական) 0.006հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» հողերի կատեգորիայից փոխադրել «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

17. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Բագրևանդ թաղամասի հ.51/2 հասցեում գտնվող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.27062022-01-0025 վկայական) 0.0066հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողերի կատեգորիայից՝ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

18. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյան փողոցի հ.54/2 հասցեում գտնվող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15062021-01-0234 վկայական) 0.006հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» հողերի կատեգորիայից փոխադրել

«էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

19. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.03.2021թ. հ.13052024-01-0164 վկայական) Ռուբինյանց փողոցի հ.7 հասցեի գույքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2030 թվականի մայիսի 1-ը ժամկետով տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

20. Գույքի նվիրատվության մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի «Տրանսպորտային համակարգի արդիականացում» ծրագրով ձեռք բերված, 101,200,000.0 (հարյուր մեկ միլիոն երկու հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 1 հատ Zhongtong bus LCK6126EVG մակնիշի տրոլեյբուսը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

21. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման NN 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-6 հավելվածների:

22. Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սույն որոշման 2-րդ կետում նշված խմբերին Երևան քաղաքում սեփականության իրավունքով պատկանող բնակելի նշանակության անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի գծով սահմանել արտոնություն՝ ազատելով հաշվարկված առկա հարկային պարտավորությունների և հաշվարկված տույժի վճարումից 41429573 (քառասունմեկ միլիոն չորս հարյուր քսանինը հազար հինգ հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամի չափով՝ համաձայն 1-12 հավելվածների և դրանց

մասով անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցի գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:

1. Սույն որոշմամբ սահմանված արտոնությունները կիրառվում են քաղաքացիների հետևյալ խմբերի նկատմամբ.

1) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով զոհված, վիրավորված և ստացած վնասվածքներից հաջորդող տարիների ընթացքում մահացածների ընտանիքների անդամներ,

2) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պատերազմների 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամներ, որոնք անշարժ գույքի հարկով և (կամ) փոխադրամիջոցի գույքահարկով հարկման օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունը և (կամ) փոխադրամիջոցը ձեռք են բերել մինչև Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 690-Ն որոշումն ուժի մեջ մտնելը,

3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով գերեվարված, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված (կամ նրանց ընտանիքի անդամներին) անձինք:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 20, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2025 թվականի ապրիլի 22-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

23. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N267-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N267-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար
2. Գրիգոր Իսկանդարյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Արմենակ Դանիելյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
5. Դիանա Քերոբյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
6. Իոսիֆ Կուբատյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի տեղակալներ Սուրեն Գրիգորյանը և Լևոն Հովհաննիսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթներով հանդես եկան Երևանի քաղաքապետի տեղակալներ Սուրեն Գրիգորյանը և Լևոն Հովհաննիսյանը:

2. Արշակ Սարգսյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար
4. Զարուհի Փոստանջյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
5. Արամ Թորոսյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
6. Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով

հանդես եկավ խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը, «Ազգային առաջընթաց» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության անդամ Նատալյա Սինորյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան համայնքում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N267-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման 1-ին կետի 15-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) Որոշման 1-ին կետի 15-րդ ենթակետից հետո լրացնել նոր 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«16) Արցախյան պատերազմների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ զոհված, գերեվարված կամ անհայտ կորած կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց կամ նրանց ընտանիքի անդամներին (երեխաներ, ծնողներ և ամուսին), ինչպես նաև ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում ունեցող կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին պատկանող (բաժնային սեփականության իրավունքի դեպքում իր բաժնի մասով) բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների աղբահանության աշխատանքները կազմակերպելու 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

17) Պետական նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով միայնակ չաշխատող կենսաթոշակառու համարվող անձին պատկանող (բաժնային սեփականության իրավունքի դեպքում իր բաժնի մասով) բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների աղբահանության աշխատանքները կազմակերպելու 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

18) ամսական մինչև 10 կիլովատ էլեկտրաէներգիա սպառող բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների աղբահանության աշխատանքները կազմակերպելու 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է

արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

19) բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում՝

ա.բազմաբնակարան բնակելի կամ բազմաֆունկցիոնալ շենքերի բնակարանների ընդհանուր մակերեսի 65 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ կոշտ կենցաղային թափոնների աղբահանության աշխատանքները կազմակերպելու 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ 50 տոկոսի չափով.

բ.անհատական բնակելի տների, առանձնատների, այգետնակների (ամառանոցների), օժանդակ ու տնտեսական շինությունների, բազմաբնակարան բնակելի կամ բազմաֆունկցիոնալ շենքերի ընդհանուր մակերեսի 75 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ կոշտ կենցաղային թափոնների աղբահանության աշխատանքները կազմակերպելու 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ 75 տոկոսի չափով.

գ. ավտոտնակների համար՝ կոշտ կենցաղային թափոնների աղբահանության աշխատանքները կազմակերպելու 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:».

3) Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4) Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետից հետո լրացնել նոր 4-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) Սույն որոշման 1-ին կետի 16-րդ, 17-րդ, 18-րդ ենթակետերում նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք է հանդիսանում տեղական վճարի արտոնություն ստանալու վերաբերյալ դիմումը, որին կից ներկայացվում են սույն որոշման 1-ին կետի 16-րդ, 17-րդ, 18-րդ ենթակետերով սահմանված խմբերի ներկայացուցիչ լինելու փաստը հավաստող փաստաթղթերի պատճենները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 43, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 14

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

24. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն Սաշա Կատվալյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

1. Վահան Ավագյան- Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար
2. Գրիգոր Իսկանդարյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Մեսրոպ Մանուկյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Արամ Թորոսյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
5. Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
6. Արշակ Սարգսյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
7. Իզաբելլա Աբգարյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն Սաշա Կատվալյանը և քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 9 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Միքայել Խաչատրյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
3. Քրիստինե Վարդանյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
4. Զարուհի Փոստանջյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

5. Լևոն Լևոնյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

6. Արամ Թորոսյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
7. Սամվել Հակոբյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
8. Գրիգոր Իսկանդարյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

9. Լուսինե Սարգսյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն Սաշա Կատվալյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Ընդմիջում.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

Նիստին ներկա է ավագանու 31 անդամ:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 18.09.2009թ. N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 3-րդ ենթակետով՝ հայտարարվեց երեսուն րոպե ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 14.30-ին:

Քվորում չկա:

2025 թվականի ապրիլի 22-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված 24-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» և 25-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշման գործողությունը կասեցնելու մասին» հարցերի մասով նիստը համարվեց չկայացած:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց
Ն. Ղուկասյանը